


23301

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՎԱՐՁԱՏՐՎԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈԼԻԽՈԶՆԵՐՈՒՄ



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴՅԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿԶ.
ՄՊՍԿՎ.Ա.

1931

331-2

129 APR 2013

r-85

Ա. ԻՎԱՆՈՎ

up

31452-4.2

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե
ՎԱՐՁԱՏՐՎԻ ԱՇԽԱՏԱՆՔ
ԿՈԼԻՌՈԶՆԵՐՈՒՄ

17-66

ԽԵԶԻՐ ԺԱՇՅՈՎՈՒԹԻՒՆ ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՄԱՐԱԿ. 1931

1931

14844-57

23301

կու

ԲԱՐՁՐԱՑՆԵՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱ-
ՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

Թարգմ. Ս. Հ.

Աշխատանքի արտադրողականության բարձրացումը կոլխոզներում առաջնակարգ նշանակություն ունի։ Կոլեկտիվ աշխատանքի բարձրագույն արտադրողականությունը կապահովվի հաջող լուծումը այն ինդիրների, վոր կուսակցությունը և Արոհբային իշխանությունը դրել են կոլխոզների առաջ հնդամյակի յերրորդ, վճռական տարում։

Աշխատանքի արտադրողականության բարձրության վրա ազդում են մի շարք սոցիալ-տնտեսական և տեխնիկական պայմաններ, արտադրության միջոցների հանրայնացման աստիճանը, նրանց կազմի քանակն ու վորակը, կոլխոզի տեխնիկական զինվածությունը, բանվորական ուժի պլանային կազ-

Уполн. главлита № В-187 Зак. № 935 Тираж 6.000
Книжная ф-ка Центриздата Народов ССРР. Москва,
Шлюзовая набережная, 10.

մակերպումը կոլեկտիվ արտադրության մաջ՝
կոլխոզնիկների վորակավորումը, նրանց գի-
տակցականությունը և նյութական շա-
հագործությունը:

Կոլխոզնիկի նյութական շահագործությունը վորոշվում ե բերքի բաշխման ժա-
մանակ նրա ստացած յեկամտի մեծությամբ:
Իսկ կոլեկտիվ արտադրության շահավետու-
թյունը իր հերթին կախված ե նրանից, թե
կորչափ արտադրողական ե յեղել կոլխոզնիկի
աշխատանքը, այսինքն նրանից, թե յուրա-
քանչյուր աշխատունակ կոլխոզնիկ և կոլ-
խոզը ամբողջությամբ վորքան ընդհանուր
պլողուկցիա կարտադրեն: Այդ իսկ պատ-
ճառով կոլխոզնիկի աշխատանքի արտադրո-
ղականության խնդիրը խիստ կարենոր նշա-
նակություն ե ստանում ինչպես ամ-
բողջ կոլխոզի, իր (կոլխոզնիկի) և պետու-
թյան համար, նույնպես և դեռ կոլխոզ
շմառած չքավոր - միջակ գյուղացիության
համար: Մենատնտեսավար գյուղացին (չքա-

վորը, միջակը), տեսնելով խոշոր կոլեկտիվ
արտադրության մեծագույն առավելությունն-
երը, ավելի շուտ ե ազատվում տատա-
նումներից և անհատական տնտեսավարու-
թյան սովորույթներից:

ԻՆՉՊԵՍ ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԿՈԼԽՈԶՆԻԿԻ ԱՇԽԱ- ՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մենք արդեն ասացինք, վոր կոլխոզնիկի ար-
տադրանքը բարձրացնելու համար, բացի աշ-
խատանքի կանոնավոր կազմակերպումից
և բանվորական ուժի կանոնավոր բաշխու-
մից, հարկավոր ե յեկամուտների կանոնա-
վոր բաշխման միջոցով նյութականապես շա-
հագործուել կոլխոզնիկին: Այդ իսկ պատճա-
ռով յեկամուտների բաշխման խնդիրը սերտ
կապված ե աշխատանքի արտադրողականու-
թյան խնդիրների հետ, աշխատանքի կազմա-
կերպման խնդիրների հետ: Կոլեկտիվ արտա-
դրության պրակտիկայում արդեն նշված ե,
վոր այն կոլխոզներում, ուր յեկամուտները

բաշխվում ելին վոչ թե ըստ կատարած աշխատանքի քանակի ու վորակի, այլ ըստ շնչերի, ըստ հողերի, ըստ փայերի և այլն, այնտեղ աշխատանքի արտադրողականությունը շատ ցած ե յեղել, ուստի և կոլխոզնիկների յեկամուտը — շատ փոքր:

Վճռ կոլխոզնիկը ցանկություն կունենա ավելի շատ և ավելի լավ աշխատելու, յեթե տնտեսական տարիա արդյունքից նա պիտի ստանա նույնքան յեկամուտ, վորքան և ավելի քիչ աշխատած կոլխոզնիկները (բաշխումը ըստ շնչի): Եյութական շահագրգովածության բացակայության դեպքում թե ինքը աշխատանքը և թե այդ աշխատանքի արդյունքը շատ վատ կլինեն:

Իսկ ի՞նչ ե նշանակում յեկամուտների բաշխումը ըստ գործադրված աշխատանքի քանակի ու վորակի:

Դա նշանակում ե, վոր բերքի բաշխման ժամանակ նա, ով ավելի շատ և աշխատել, պետք ե իր աշխատանքի համար շատ ստանա:

6

Կոլխոզնիկի գործադրված աշխատանքը կարող ե մոտավորապես չափ վել կատարած աշխատանքի ժամանակով և կամ քանակով ու վորակով:

Գործադրված աշխատանքի ժամանակով չափելը (որավարձ կամ վորոշ ժամանակամիջոցով աշխատանք) դրական արդյունք չի տալիս — այդ դեպքում աշխատանքի արտադրողականությունը ընկնում է:

Վորոշ ժամանակամիջոցով կամ որավարձ աշխատանքի դեպքում գործադրված աշխատանքի չափի միավորն ե հանդիսանում ժամանակը (որը): Այդ դեպքում բոլորովին հաշվի չի առնվում կոլխոզնիկի աշխատանքի քանակը: Կոլխոզնիկների գործադրած աշխատանքի հաշվառման այդ միջոցը կոչվում ե «նշանադերի» սիստեմ — «ինչպես ել վոր աշխատես, միևնույնն ե — այդ «նշանադեր» աշխատած որվա նշանը — կստանաս»:

Այդ ժամանակային, որավարձով աշխատելու սիստեմի դեմ ոլետք ե վճռականորեն պայ-

քարեւ: Այնտեղ, ուր այդ սիստեմը գործադրվում ե մինչև այժմ, անհրաժեշտ ե անհապաղ անցնել գործադրված աշխատանքը կատարված աշխատանքի քանակով չափելու սիստեմին:

Այդ սիստեմը աշխատանքի արտադրողականության ավելի լավ չափանիշներ ե տալիս, քան թե ժամանակով չափելու սիստեմը: Հատավարձ աշխատանքի (սդելչինա) դեպքում վերանում ե աշխատանքի համար «նշանագծեր» դնելու անհրաժեշտությունը, վորովհետև գործադրված աշխատանքը չափելու հիմնական միավորն ե հանդիսանում աշխատանքի քանակը: Յեթե աշխատանքի քանակը գնահատենք աշխատանք աշխատանքում այսպես կոչված հատակը գործադրության մեջ, աշխատանքը կատարված այսպես կոչված հատակը գործադրության մեջ է:

ԻՆՉՊԵՍ Ե ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ՅԵՎ ԶԱՓՎՈՒՄ ՀԱՏԱՎԱՐՁ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Դործնականորեն սդելչինան սահմանվում ե հետեւյալ կարգով: Նախ՝ աշխատանքի յուրաքանչյուր տեսակի վերաբերմամբ սահմանվում են արտադրանքի նորմաներ 10-ժամյա բանվորական որվա ընթացքում և ապա՝ աշխատանքի յուրաքանչյուր տեսակը արժեքավորվում ե աշխատանքաորերով:

Որինակ, յերկխոփանի գութանով յերկու ձիյով միջին տեսակի հողը 15 սանտիմետր խորությամբ վարելու համար արտադրանքի նորման 10-ժամյա բանվորական որվա ընթացքում սահմանված ե մի հեկտար: Հաշվվերի պարզության համար այդ աշխատանքը գնահատվում ե մեկ աշխատանքաորով: Յեթե կոլխոզնիկը շնորհիվ նրան, վորաշխատանքի ընթացքում չի ունեցել մեծ ընդմիջումներ, կարգին ե պահել տավարն

ու ինվենտարը, ժամանակին հանգստանալու
հնարավորություն ե տվել ձիյերին, հետևել
ե նրանց ժամանակին սնունդ ու ջուր արբ-
վելուն,—յեթե շնորհիվ այդ ամենի կող-
խոզնիկը 10-ժամյա բանվորական որվա ըն-
թացքում վարել ե (և լավ վարել) վոչ թե
մեկ հեկտար, ինչպես պահանջվում ե ար-
տադրանքի նորմաներով, այլ շատ ավելի,
յենթադրենք—մեկ ու կես հեկտար, նրա
հաշվին գրվում ե մեկ ու կես աշխա-
տանքա-որ, թեև նա իր աշխատանքը կա-
տարել ե մեկ բանվորական որվա ընթաց-
քում։ Այստեղ հաշիվը շատ պարզ ե —
քանի վոր մի աշխատանքա-որ ե
հաշվում մեկ հեկտարի վարը, ապա
ուրեմն վարած հեկտարների քա-
նակն ե (կատարված աշխատանքի
քանակը) հիմք հանդիսանում կոլ-
խոզնիկին աշխատանքա-որեր վե-
րադրելիս։ Վարել ե 5 հեկտար—ստա-
նում ե 5 աշխատանքա-որ, վարել ե 2—

ստանում ե 2 աշխատանքա-որ և այլն։ Մի
խոսքով, հատավարձ, սղելնի աշխա-
տանքի դեպում հաշվի յե առ-
նվում վոչ թե աշխատանքի հա-
մար գործադրված ժամանակը, այլ
աշխատանքի քանակը (և վորակը):
Դրանով ե տարբերվում սղելշինան որա-
վարձ աշխատանքից։

Հատավարձ աշխատանքի համար իր ան-
դամների հետ կոլխոզը հաշիվ ե տեսնում
բերքի բաշխման ժամանակ։ Նայած անդամ-
ների միջև բաշխվելիք յեկամտի չափե-
րին, սահմանվում ե մեկ աշխատանքա-որվա
յեկամուտը։ Յուրաքանչյուր կոլխոզնիկ ստա-
նում ե այնքան յեկամուտ, վորքան աշխա-
տանքա-որեր ունի նա (մեկ աշխատա-որվա
յեկամուտը բազմապատկվում ե կոլխոզնիկի
գործադրած աշխատանքա-որերի քանակով):

Հատավարձ աշխատանքի դեպ-
օւմ միայն այն կոլխոզնիկն ե
բերքի բաժին ստանում կոլխոզի

յեկամուտներից, ով վոր իրապես
աշխատել ե կոլխոզում և ոգնել ե
իր կոլխոզին հասնելու կոլեկտիվ
արտադրության (տնտեսության)
առավելագույն զարգացմանը:

Հատավարձ աշխատանք մտցնելու համար,
ինչպես արդեն ասված եր, անպայման ան-
հրաժեշտ ե նախորոք սահմանել արտա-
դրանքի նորմաներ ամեն տեսակի աշ-
խատանքի համար և կատարված աշխա-
տանքի միավորի (հեկտար, սայլ, հատ, կի-
լոգրամ, լիտր և այլն) գնարկումը:

Արտադրանքի նորմաներ սահմանելիս
պետք ե ոգտագործել լավագույն կոլխոզ-
ների, լավագույն բրիգադների և լավագույն
կոլխոզների արտադրանքի նորմաները:

Այդ նորմաների հիման վրա պետք է գոր-
ծադրել սուբջինան առավելապես խմբակա-
յին կամ բրիգադային ձևով:

Անհատական սղելշինան գործադրվում ե
այն դեպքերում, յեթե խմբակային կամ

բրիգադային աշխատանքի մեջ անհնարին ե
հաշվի առնել յուրաքանչյուր կոլխոզների
աշխատանքի քանակն ու վորակը, կամ յերբ
աշխատանքի բնույթը չի թույլատրում բրի-
գադներով աշխատել (կովերի կիթը, անու-
սունների խնամքը և այլն):

Բոլոր հատավարձ աշխատանք-
ները պայմանավորվում են վոչ մի-
այն պատրաստանյութի նորմայով և
գնահատությամբ աշխատանքառե-
րով, այլև աշխատանքի վորակով
և նրա կատարման ժամկետով։ Վոչ
մերեպում թույլատրելի չե աշ-
խատանքի ժամկետի յերկարումը,
վորովնետև մի շարք դյուղատնտեսական աշ-
խատանքներ ժամանակին չկատարվելու դեպ-
քում տնտեսական վնաս են հասցնում կո-
լեկտիվին:

Դաշտավարության մեջ հատավարձ
աշխատանքի միավորներն են՝

ա) 1 հեկտար — վարի, ցաքանման, ցանքսի,
հունձի համար և այլն.

բ) 1 տոննա — կալսելու, կարտոֆել ջու-
կելու համար և այլն.

գ) 1 տոննա-կիլոմետր — զանազան բեռ-
ների փոխադրման համար (հացահատիկ, կեր,
պարարտանյութ և այլն):

Անասնաբուծության մեջ հատա-
վարձ աշխատանքները հաշվարկվում են, նա-
յած աշխատանքի բնույթին, անասնի թվով
կամ ստացված մթերքի կշռով։

Կաթնատու անասուններին խնամելու աշ-
խատանքում սդելչինան հարկավոր ե սահ-
մանել ստացված կաթի լիտրով, վորովհետև
կովի արգյունավետության վրա, բացի կերի
վորակից և գոմի տաքացումից, ազդում ե
նաև կովին խնամելու ձեր, կիթը և այլն։
Այստեղ անհրաժեշտ ե գնահատել տավարա-
պահի և կթողի աշխատանքը, հանձնել նրանց
հոտի վորոշ մասը (10—15 դլուխ) և այդ
կովերից ստացվող արտադրանքի քանակը

գրել նրանց հաշվին, իրեկ աշխատանքա-
որերի վորոշ քանակի։ Որինակ, յուրաքան-
չյուր 60 լիտր կաթի համար գրել մեկական
աշխատանքառոր անասնապահի և կթողի հաշ-
վին։ Սդելչինան սահմանելիս անհրաժեշտ
ե պայմանավորել կաթի յուղալիության տո-
կուը և կաթի մաքրությունը։ Յեթե հնա-
րավոր չե հաշվարկումը սահմանել ստացվող
մթերքից (կաթ, ավելացած մսի քաշը և այլն),
աշխատանքի ծավալը վորոշվում ե սպա-
սարկվող անասունների քանակով։

Սդելչինան անհրաժեշտ ե կիրառել կոլ-
խողի բոլոր աշխատանքներում, բացի նրան-
ցից, վորոնք բոլորովին չեն յենթարկվում
նորմաների։

Սդելչինան նպաստում ե սոցիալիստա-
կան մրցման և հարվածայնության լայն ծա-
վալմանը. սդելչինան ունի խոշոր դաստ-
կարգային նշանակություն. նա զենք ե մեր
ձեռքին — կուլակի, պողկուլաչնիկի և պարա-
պորդի դեմ պայքարելու համար. սդելչինան

թեթևացնում ե բանվորական ուժի ղեկավարությունը. սդելշինան — հանդիպական պլանների իրականացման հիմքն ե:

ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Ե ՊՐԵՄԻԱ ՏՐՎՈՒՄ

Վորագեսզի սդելշինայի ղեղքում չընկնեն բացառապես աշխատանքների քանակի յետելից և չմոռանան աշխատանքների վորակի մասին, հարկավոր ե լայն գործադրել խրախուսիչ ձեռնարկումների (պրեմիալ վարձատրությունների — պարզեատրության) սիստեմը՝ թե աշխատանքի վորակի համար և թե պլանների կատարման ու գերակատարման համար:

Իբրև որինակ, մեջ բերենք մրցակցող և հարվածային բրիգադների պարզեատրման հետեւյալ ղեղքերը՝

1. Հանձնարարված աշխատանքի կատարման ժամկետի կբճատումը (պլանի կատարումը և գերակատարումը).

2. վառելանյութի և այլ նյութերի տնտեսումը.

3. տրակտորների և ավտոտրանսպորտի դատարկ վաղքերի և դաշտարների պակասեցումը.

4. բանող անասունների վորակային կացության (աշխատունակության, առողջության, սնվածության և արտաքին վիճակի) պահպանությունը և բարձրացումը.

5. գյուտեր, կատարելագործումներ և արժեքափոր առաջարկներ տնտեսության բարելավման ուղղությամբ.

6. աշխատանքի առանձին աչքի ընկնող արդյունքները անասնաբուծության և տընտեսության այլ ճյուղերի մեջ:

Այս կամ այն աշխատանքի համար պարզեատրելիս պետք ե անպայման հաշվի առնել կատարված աշխատանքի վորակը:

Պարզեատրել կարելի յե առանձին աշխատանքների համար, աշխատանքների առան-

(14844-57)

ձին արդյունքների համար, այլև այն արդյունքների համար, վորոնք ստացվում են տնտեսության այս կամ այն ճյուղում կատարված աշխատանքների վերջնական հանրագումարը կազմելիս։ Տեղերում յուրաքանչյուր կոլխոզ պետք ե բազմակողմանիորեն քննեն, հաշվի առնե բոլոր տեղական առանձնահատկությունները և ընդունի պարզեատրման կարգը։

Պարզեատրման համար յուրաքանչյուր կոլխոզ հատուկ ֆոնդ ե հատկացնում։

Պարզեատրումը պետք ե կատարվի միմիայն աշխատանքի ծավալը (չափը) և վորակը հանգամանորեն վորոշելուց հետո։

Պարզեատրման կարգը պետք ե հաստատի կոլխոզի վարչությունը գեռ աշխատանքները չսկսված, այն հաշվով, վորպեսզի յուրաքանչյուր կոլխոզնիկ իմանա, թե ինչի համար, վեր աշխատանքների համար և ինչ չափով պըրեմիալ վարձատրություն կարող և նա ստանալ։

Պարզեատրել կարելի յե փողով, դեֆիցիտային ապրանքներով, պատամիանատու աշխատանքի աւագ քաշելով, դասընթացներ կամ վորևե դպրոց ուղարկելով և այն։

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԿԵՏԻ ԿՐՃԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Դյուղատնտեսական խոշոր կոլեկտիվ արտադրության վեջ ահազին նշանակություն ունի զանազան աշխատանքների ժամանակին կատարվելը։ Հատկապես կարևոր նշանակություն ունի աշխատանքի կատարումն ու գերակատարումը, ժամկետների կրճատումը գարնանացնի աշխատանքների մեջ։ Այստեղ ուշացման յուրաքանչյուր որը անբերիւթյան վտանգ ե սպառնում։

Պրեմիան ցանքսի ժամկետի կրճատման համար նպատակահարմար ե տալ ծիլերը յերեալուց հետո, այսինքն այն ժամանակ, յերբ կարելի յե առանց սխալվելու վորոշել ցանքսի համաշափությունը։

Աշխատանքի ժամկետի կրծառման համար
պրեմիալ վարձատրություն տալիս, հարկա-
վոր ե յելնել մոտավորապես հետևյալ հաշ-
վից. յեթե բրիգադին առաջադրված ե յեղել
կատարել վորեն աշխատանք 10 որում
200 հեկտար հողամասի վրա (որինակ —
վարել և ցանել), իսկ բրիգադը այդ աշխա-
տանքը (անհրաժեշտ վորակի) կատարել ե
8 որում, այսինքն ժամկետից 2 որ առաջ,
այդ դեպքում հանձնարարվում ե սահմանել
կրծառման յուրաքանչյուր որվա համար հա-
տուկ պրեմիալ վարձատրություն։ Որինակ՝
առաջին որվա համար — 20-ական կոպեկ
մշակված հրապարակի յուրաքարչյուր հեկ-
տարին, յերկրորդ որվա համար — 25-ական
կոպեկ և այլն։

Այդ դեպքում բրիգադն ստանում ե
պրեմիալ վարձատրություն՝

$$1\text{-ին որվա համար } 20 \text{ կ.} \times 200 = 40 \text{ ոռոր.}$$

$$2\text{-րդ } \gg \gg 25 \text{ կ.} \times 200 = 50 \text{ ոռոր.}$$

Ընդամենը 2 որվա համար 90 ոռոր.

Պրեմիալ միջոցները բաշխվում են բրի-
գադի աշխատավորների միջև համաձայն
նրանցից յուրաքանչյուրի վորակավորմանը
և աշխատանքին մասնակցելու քանակի ու
վորակի աստիճանին։

Պարզեցատրումը աշխատանքի ժամկետի
կրծառման համար նպատակահարմար ե գոր-
ծադրել և այլ հարվածային կամպանիաների
ժամանակ, ինչպես, որինակ քերքահավաքի,
կալմելու, գյուղատնտեսական մեքենաների
ու գործիքների վերանորոգման։

Պարզեցատրումը աշխատանքի ժամկետի
կրծառման համար պետք ե կապված լինի
և այն հաշվառման հետ, վոր աշխատանքի
բարձր արտադրողականությունը բացասա-
բար չափութեանց կոլխոզնիկ-
ների և թե՛ բանող անասունների
առողջության և աշխատունակու-
թյան վրա, չառաջացնի հյուծվա-
ծություն և ուժերի գերալարում։

	Ծախսված և	Ծախսված և
	փաստորեն (ցենտներով)	Տնտեսված և
Կերոսին —	131,5	115
Բենզին —	2,63	1,73
		16,5 0,9

ՑԵՐԵ այդ տնտեսումը վերածենք փողի,
կստանանք.

$$\begin{array}{l} \text{Նավթի } \frac{\text{արժեքը}}{\text{Բենզինի}} = 5 \text{ և } 08 \text{ կ.} \times 16,5 = 83 \text{ և } 82 \text{ կ.} \\ \text{Բենզինի } \frac{\text{}}{\text{}} = 15 \text{ և } 16 \text{ կ.} \times 0,9 = 13 \text{ և } 64 \text{ կ.} \\ \hline \text{Ընդամենը } \frac{\text{տնտեսված}}{\text{}} = 97 \text{ և } 46 \text{ կ.} \end{array}$$

Ստացված 97 ռուբ. 46 կոպ. տնտեսումի
50 տոկոսը (48 և 73 կ.) հարկավոր եւ տալ
աշխատավորներին, վորակես պրեմիա:

Իսկ նրանց, ովքեր իրենց անփութու-
թյամբ թույլատրում են ծախսել սահման-
ված նորմաներից ավելի վառելանյութ, ան-
հրաժեշտ եւ տուգանել, այսինքն — պահան-
ջել նրանցից ավելորդ ծախսված վառելա-
նյութի արժեքը:

ԴԱՏԱՐԿ ՎԱԶՔԵՐԻ ՊԱԿԱՍԵՑՈՒՄԸ

Աշխատանքների կանոնավոր բաշխումը
արտադրության մեջ բարձրացնում եւ աշ-
խատանքի արտադրողականությունը: Արտա-

դրության կանոնավոր կազմակերպման
չափանիշներից մեկն եւ աշխատանքների
բաշխման այնպիսի սիստեմը առանձին
տրակտորային բրիգադների միջև, ուր չկան
ավելորդ հանդիպական վազքեր, ավելորդ
տրակտորների ուղարկում և այլն:

Ագրոնոմի, տեխնիկական դեկավարի, բրի-
գադիրի, կոլյոգնիկների գիտելիքները, փոր-
ձառությունը, նախաձեռնությունը, հնարա-
գիտությունը մեծ դեր են խաղում տրակ-
տորների անարտադրողական փոխադրում-
ների կըճատման գործում:

Դատարկ վազքերի պակասեցման գործում
վորքան կարելի յէ խոշոր հաջողություն-
ների համար նպատակով կիրառվում եւ
ագրոնոմի, տեխնիկական դեկավարի, բրի-
գադիրի և կոլյոգնիկների պարգևատրումը,

ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԴԱԴԱՐԻ ՊԱԿԱՍԵՑՈՒՄԸ

Կոոպերատիվ մեքենա-տրակտորային կա-
յանների մեկ տարվա փորձը (1929 թ.)

ցույց ավեց, վոր տրակտորների ոգտագործումը դեռևս իր բարձրության վրա չեւ Բանվորական ժամանակի մեկ - յերրորդից ավելին խլում եւ տրակտորների դադարը վերանորոգման, բանվորների գործակքության, վատ յեղանակի և այլ պատճառներով։ Վճռականորեն պայքարելով այդ դադարների դեմ, մենք պետք եւ դա հասցնենք հնարավոր մինիմումին։ Պետք եւ ամեն կերպ խրախուսվեն այն բրիգադները, վորոնք պակասեցնում են դադարը։

ԲԱՆՈՂ ԱՆԱՍՈՒՆԵՐԻ ՆՈՐՄԱԼ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՀՈԱՆՈՒՄԸ

Պարզեատրումը այս գործում նախազգուշացնում եւ բանուկ անասուններին չափազանց հոգնեցնելուց և ընդհանրապես նպաստում եւ նրան, վոր ոգտագործման մեջ գտնվող բանող տավարը պահպանի ամբողջ ժամանակ իր նորմալ վիճակը և չարագործութիւնը տեղի չունենան թե չափազանց

բեռնավորելու տեսակետից և թե խնամքի վերաբերմամբ։ Այդ հանգամանքը անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքի քանակի և վորակի կատարման ժամանակ, վորպեսզի դա չկատարվի ի վսաս բանող անասունների նորմալ կացության պահպանմանը։

Պրեմիաների չափը սահմանվում եւ այս կամ այն գյաղատնտեսական կամպանիայի սկզբում — գյուղական գործարքության բարելավման վերաբերմամբ յեղած արժեքավոր առաջարկների համար։ Պրեմիայի չափը սահմանվում եւ, նայած գյուղի կամ առաջարկի արժեքավորության աստիճանին։

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆԱՍՆԱԲՈՒԹՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՃՅՈՒՂԵՐԻ ՄԵԶ

Յուրաքանչյուր կոլխոզ պետք եւ նախատեսնի իր անասնաբուծական տնտեսության

ԲՈԼՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵՑԵՔ ԱՇԽԱ- ՏԱՆՔԱ-ՈՐԵՐՈՎ

բոլոր առանձնահատկությունները և մշակե պրեմիաների չափը խնամքի, տավարի սնուցման, կիթի բարձրացման և այլ աշխատանքների համար։

Պրեմիաների չափը սահմանվում է, նայած կենդանու աճած արժեքի կամ կիթի բարձրացման չափին, մոտ 10 մինչև 40% աճման համար — հանդեպ սահմանված նորմաներին։

Բացի պարզեարման սիստեմից, վորը այստեղ իբրև որինակ ե առաջ բերված, կոլխոզները պետք ե մշակեն մի շարք միջոցներ — աշխատանքի վատ վորակից նախազգուշացնելու համար։ Այդպիսի նախազգուշացում կարող են լինել տուգանքները, վորոնց չափը պայմանավորվում ե աշխատանքների քանակի ու վորակի աստիճանով, և այլ միջոցներ թե նյութական կարգի և թե հասարակական կարգի — վորոշ հասարակական ոգնություն ցույց տալով այն կոլխոզնիկներին, վորոնց աշխատանքը սահմանված վորակից ցած է։

Կոլխոզում սղել շինան մտցնելու համար անհրաժեշտ ե սահմանել արտադրանքի նորմաներ և կատարել աշխատանքների գնահատում (յուրաքանչյուրը տուանձին)։ Թե արտադրանքի նորմաները և թե աշխատանքների գնահատումը լայն ու մանրամասն քննության են յենթարկվում արտադրական խորհրդակցությունների մեջ և վերջնականապես հաստատվում են կոլխոզնիկների ընդհանուր ժողովում։ Այդ բոլորը անհրաժեշտ ե նրա համար, վորպեսզի յուրաքանչյուր կոլխոզնիկ, յուրաքանչյուր կոլխոզուհի նախորոք, աշխատանքները սկսելուց վոչ ուշ քան մեկ ամիս առաջ, իմանա այս կամ այն աշխատանքի բեռնավորումը (արտադրանքի նորման) և նրա գնահատումը։

Աշխատանքների գնահատումը սահմանվում է միայն այն պատճառով, վոր աշխատանքների առանձին տեսակների կատա-

րումը կոլխոգներում պահանջում եւ ֆիզիկական աշխատանքի տարբեր ծախս և աշխատավորների տարբեր պատրաստություն (փորձառություն, վորակավորում): Պրակտիկան հաստատեց, վոր այն կոլխոգներում, ուր ասմանված չեր զնահատում, համաձայն աշխատանքների բնույթին ու ծանրությանը և հաշվի առնելով այդ աշխատանքի համար պահանջվող վորակավորումը, այդ կոլխոգներում կաղում եր աշխատանքային արտադրական դիսցիլինան, ստացվում եր աշխատանքի ցած արտադրողականություն, նկատվում եյին ամենից ավելի ծանր աշխատանքից խուսափելու գեպքեր, այդ հողի վրա գժղություններ եյին ստեղծվում կոլխոգնիկների միջև և այդ բոլորը խախտում եր կոլխոգի տնտեսական կայունությունը: Բացի դրանից, կոլեկտիվ արտադրության մեջ աշխատանքների գնահատման բացակայության գեպքում վորակավորված կոլխոգնիկները շահագրգոված չեյին գործադրելու:

Երենց վորակավորումը — նրանք գերադասում եյին կատարել պարզ ու թեթև աշխատանք: Իսկ աշխատանքների գնահատման դեպքում կոլխոգնիկը նյութականորեն շահագրգոված և վոչ միայն գործադրելու իր վորակավորումը, այլ և այն հետագայում բարձրացնելու:

Կոլխոզային շարժման պրակտիկան միանգամայն ժխտում եւ աշխատանքների գնահատումը փողային արտահայտությամբ, վորովհետեւ նա գլեթե միշտ ու ամենուրեք առաջացրել և դասակարգային խոտորումներ: Աշխատանքների գնահատումը փողային արտահայտությամբ կոլխոգնիկները մեծ մասսամբ ընդունում եյին վորպես հաստատաշխատավարձ և հաճախ պահանջներ եյին ներկայացնում կոլխոգների վարչություններին — անհապաղ և լրիվ վճարել բոլոր վորդային գումարումները կատարված աշխատանքների համար:

Դեպքեր եյին պատահում, յերբ փողային արտահայտությամբ սխալ գնահատման շնոր-

հիվ կոլխոզները հնարավորություն չունեցին իրենց յեկամուտներով ծածկելու և կոլխոզնիկների աշխատանքի վարձատրության ծախսերը։ Այդ բոլորը առաջացնում եր աշխատանքների կազմալուծում, աշխատանքային դիսցիպլինայի անկում, իսկ յերբեմն նույնիսկ կոլխոզի կատարյալ քայլայում։

Այդ աննորմալ յերկույթները, վոր առաջանում եյին աշխատանքները փողային արտահայտությամբ գնահատելուց, վորքան կարելի յե շուտ վերացնելու նպատակով ԽՍՀՄ-յան Կոլխոզկենտրոնի վարչությունը դեռ ևս 1930 թ. ոգոստոսին հրահանգեց, վորպեսզի բոլոր աշխատանքների գնահատումը կատարվի միայն աշխատանքա-որերով։ Աշխատանքների գնահատումը փողային արտահայտությամբ խճողում եր նաև բերքի ու յեկամուտների բաշխման խնդիրը։ Միենույն ժամանակ հարկավոր ե վճռականորեն պայքարել կոլխոզնիկների «վճար» և «աշխատավարձ» տերմինների դեմ։

Կոլխոզնիկը տնտեսական տարվա վերջում, արտադրական գործնեյության հետեւ վանքով իր գործադրած աշխատանքի քանակին ու վորակին համաձայն ստանում է յեկամուտների վորոշ բաժինը և վոչ թե աշխատավարձ, վորովհետև կոլխոզնիկը իր կոլխոզում չի ծախում իր բանվորական ուժը, այլ գործադրում ե այն իր կոլեկտիվ տնտեսության համար։ Ուրեմն և չի կարելի խոսել «աշխատավարձի» մասին։ Հարցը այն մասին ե, թե վորքան մեծ կլինի յեկամտի այն բաժինը, վոր ստանալու յե յուրաքանչյուր կոլխոզնիկ, համաձայն իր գործադրած աշխատանքի քանակին ու վորակին։ Առաջուց և կամ տարվա միջին ճշտիվ վորոշել այդ բաժինը չի կարելի, վորովհետև հայտնի չե, թե ինչ յեկամուտ ե ունենալու կոլխոզը տարվա վերջին։ Վորպեսզի հնարավոր լինի տարվա վերջին միանգամայն ճշտորեն վորոշել յուրաքանչյուր կոլխոզնիկի բաժնեմասի չափը յեկամուտների բաշխման մեջ,

անհրաժեշտ ե ամբողջ տարվա ընթացքում
հաշվի առնել աշխատանքը միայն աշխա-
տանքա-որերով:

ԻՆՉՊԵՍ ԳՆԱՀԱՏԵԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՇԽԱ- ՏԱՆՔԱ-ՈՐԵՐՈՎ

Կոլխոզային շարժման պրակտիկայում կա-
յին աշխատանքները աշխատանքա-որերով
գնահատելու զանազան միջոցներ։ Կոլխոզ-
ներից վոմանք, անկախ աշխատանքի բնույ-
թից և ծանրությունից, կոլխոզնիկի յուրա-
քանչյուր փաստորեն աշխատած որը հաշվում
ելին աշխատանքա-որ։ Այդ ձևի գնահատման
դեպքում ամեն մի աշխատող — վարում ե նա
թե ցանում, ցաքանում, անասուններին խնա-
մում և այլն — ստանում ե իր աշխատանքի
համար մի աշխատանքա-որ։ Աշխատանքների
այդորինակ գնահատման դեպքում կոլխոզ-
նիկները շահագրգուված չեն ավելի ծանր աշ-
խատանքներ կատարել, մանավանդ — վորա-
կավորում պահանջող աշխատանքներ։

Աշխատանքները աշխատանքա - որերով
գնահատելու ուղիղ ձևը այն ե, վորը հաշվի
յե առնում վոչ միայն աշխատանքների
բնույթը, այլև նրանց ծանրությունը, նաև
աշխատավորի վորակավորումը։

Քանի վոր կոլխոզները լինում են տար-
բեր չափերի, հավասարաչափ մեխանիկաց-
ված չեն, գտնվում են տարբեր աշխարհա-
գրական, կիմայական պայմաններում,
ունեն տարբեր արտադրական տիպ, — նրանց
աշխատանքները ևս շատ տարբեր են. հե-
տեւաբար, սահմանել բոլոր կոլխոզների հա-
մար աշխատանքների միատեսակ գնահատում
միանգամայն անհնարին ե։ Յուրաքանչյուր
կոլխոզ, իր տեղական առանձնահատկու-
թյուններին և տնտեսության արտադրական
տիպին համաձայն, պետք ե յուրաքանչյուր
աշխատանքի համար սահմանի վորոշ գնա-
հատում։

Աշխատանքները գնահատելիս անհրաժեշտ
ե հաշվի առնել աշխատանքի բնույթը, նրա

բարդությունը և այդ աշխատանքը կատարելու համար աշխատավորից պահանջվող վորակավորումը և տեխնիկական ունակությունները:

Աշխատանքների գնահատման հիմնական սկզբունքները կարող են լինել մոտավորապես սրանք՝ —

1. Այն աշխատանքները, վորոնք չեն պահանջում հատուկ ունակություններ, մեծ ֆիզիկական լարում, վորոնք չունեն առողջության համար պարզ արտահայտված վտանգավոր կամ վնասակար բնույթ, գնահատվում են մեկ աշխատանքա-որով:

2. Այն աշխատանքները, վորոնք պահանջում են վորոշ չափով ունակություններ և աննշան լարվածություն, առանց վորոշակի արտահայտված վտանգավորության կամ վնասակարության՝ առողջության համար, գնահատվում են մեկ ու մի քառորդ աշխատանքա-որով:

3. Այն աշխատանքները, վորոնք պահանջում են փորձառություն և ֆիզիկական լարվածություն, վորոշակի արտահայտված վտանգավորությամբ կամ վնասակարությամբ առողջության համար, գնահատվում են մեկ ու կես աշխատանքա-որով:

4. Այն աշխատանքները, վորոնք պահանջում են խոշոր ունակություններ կամ ֆիզիկական մեծ լարվածություն՝ զգալի վտանգավորությամբ կամ վնասակարությամբ առողջության համար, գնահատվում են մեկ ու յերեք քառորդ աշխատանքա-որով:

5. Այն աշխատանքները, վորոնք պահանջում են միջակից բարձր վորակավորում կամ առանձնապես ծանր աշխատանք, գնահատվում են յերկու աշխատանքա-որով:

Աշխատանքների գնահատումը սահմանելիս չպետք է թույլատրել, վորակեսզի թեթև ու ծանր աշխատանքների հարաբերականությունը յերկու անգամից ավելի լինի, վորովինետև դա կառաջացնի կոլյոզի հիմնական

մասսայի դժգոհությունը նրանց դեմ, ովքեր
կատարելու յեն այդ չափազանց բարձր
գնահատված աշխատանքները:

Հաշիվների հարմարության համար անհրա-
ժեշտ ե աշխատանքների բոլոր գնահատում-
ները աշխատանքա-որերով վերածել մեկ հեկ-
տար, մեկ տոննա, մեկ լիտր, մեկ տոննա-կի-
լոմետր և այլն աշխատանքների գնահատման:


Այդ այսպես ե արվում: Նախ՝ բոլոր տե-
սակի աշխատանքների համար սահմանվում
են արտադանքի նորմա և աշխատանքի գնա-
հատում, իսկ հետո այդ տվյալների հիման
վրա սահմանվում ե մեկ հեկտարի կամ մի
այլ միավորի աշխատանքների գնահատումը,
այսինքն — ամեն ինչ վերածվում ե հատա-
վարձ գնահատումների (սղելշինայի):

Աշխատանքների գնահատումը աշխատան-
քա-որերով հնարավոր ե վոչ միայն գաշ-
տավարության, բանջարաբուծության, ա-
նասնապահության մեջ, այլև կուեկտիվ ար-
տադրության մյուս ճյուղերի մեջ:

Բրիգադներին արվող գործուղղումների
մեջ անպայման նշանակվում ե յուրաքան-
չուր աշխատանքի գնահատումը աշխատան-
քա-որերով և բրիգադին հանձնարարված
ամբողջ աշխատանքի աշխատանքա-որերի
ընդհանուր քանակը: Բրիգադի ներսում
այդ աշխատանքա-որերը բաշխվում են կոլ-
խոպնիկների միջին, համաձայն կատարած
աշխատանքի համար սահմանված գնահատ-
ման (ցանքով համար — մի գնահատում,
ցաքանման համար — այլ գնահատում և
այլն):

Աշխատանքա-որը պետք ե դառնա գոր-
ծադրված աշխատանքի քանակը ու վորակը
չափելու հիմանական միավորը և հասարակա-
կան նոր դիսցիպլինայի ստեղծման, գյուղի
սոցիալիստական վերակառուցման գործում
ակտիվ մասնակցության չափանիշը: Աշխա-
տանքների հատակած գնահատումը աշխա-
տանքա-որերով լավագույն միջոցն ե ապա-
հովելու ռայոնի կոնտրոլ առաջադրանքների

կատարումն ու գերակատարումը, բարձրացնելու կոլխոզի և կոլխոզնիկների յեկամուռը, այլև մերկացնելու՝ կոլխոզի մեջ սղոսկած բոլոր պոդկուլաչնիկներին, վորոնք ճգնում են շահել հասարակական հաշվին և քայլայել կոլխոզը:



«Ազգային գրադարան



NL0200080

5 ЧПТ.

{ 7502

Цена 5 коп.
С. Х. 2.



М. ИВАНОВ
За сдельную работу
в колхозах
(Перевод с русского)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ ССР.
Москва, центр, Никольская, 10.